# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Արդենիս
Հեռ. (098) 48-92-72

<< 18 >> ապրիլի 2013 թվական

N 14

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Ֆ. ՑՈՂԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցողակյան

Կից ներկայացնում եմ ՀՀ Շիրակի մարզի Արդենիսի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 17-ի թիվ11-Ա որոշումը՝ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղապետարանի շենքի թվով 5 /հինգ/ աշխատասենյակները (60 քառակուսի մետր) «Արդենիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին 1 տարի ժամկետով, անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Մ. Ղարիբյան

...ԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 3051-13
18. 04. 13թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԵՆԻՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N11-Ա

<< 17 >> ապրիլի 2013 թվական գյուղ Արդենիս

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԹՎՈՎ 5 ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արդենիսի համայնքի ավագանին

որոշում է՝

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արդենիսի համայնքի սեփականությունը համարվող գյուղապետարանի շենքի թվով 5 /հինգ/ աշխատասենյակները (60 քառակուսի մետր), մեկ տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Արդենիսի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և օրենքով սահմանված կարգով կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Թևանայան Վիոլետտա՝ կողմ ------------------------------

Գևորգյան Սեյրան ՝ կողմ ------------------------------

Ջանամյան Ստեփան ՝ կողմ ------------------------------

Ղազարյան Ռայա ՝ կողմ ------------------------------

Ներսեսյան Նարինե կողմ ------------------------------

ԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԳԵԼ ՂԱՐԻԲՅԱՆ

<<17>> ապրիլի 2013 թ.

գյուղ Արդենիս